«ԱԶԳԱՅԻՆ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ»
համահայկական կուսակցության
ՀՀ 2026 թ. հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների անցումային (հակաճգնաժամային) ծրագիր
ԿԱՐԳԱԽՈՍ - «Հավատ, Հայրենիք, Ինքնիշխանություն — Հայաստանը սակարկման ենթակա չէ»

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը 1918–1920/21 թթ. Առաջին Հանրապետության իրավահաջորդն է և ոչ թե 1991 թվականին ձևավորված հետխորհրդային նորաստեղծ պետություն: 1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագիրն ամրագրել է այդ իրավահաջորդությունը՝ որպես սահմանադրաիրավական հիմնարար սկզբունք:
Սույն սկզբունքը ենթադրում է հստակ իրավաքաղաքական հետևանքներ՝ կապված Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների, սահմանների իրավական հիմքերի, ինչպես նաև արտաքին պահանջների և սպառնալիքների դիմակայման հետ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անցումային (հակաճգնաժամային) կառավարում

Սահմանվում է սահմանափակ ժամկետով, ոչ կուսակցական, պրոֆեսիոնալ կառավարման համակարգ՝ հստակ սահմանադրաիրավական մանդատով:
Անցումային փուլի հիմքում դրվում են երկու առանցքային սկզբունքներ՝
ա) անցումային կառավարության ձևավորում.
բ) արտահերթ ընտրությունների կազմակերպում, որոնց ընթացքում

անցումային կառավարության անդամները զրկվում են վարչապետի պաշտոնում առաջադրվելու իրավունքից։

2. Ինքնիշխանություն և տարածքային ամբողջականություն

Պետական քաղաքականության հիմքում դրվում է Առաջին Հանրապետության իրավահաջորդության սկզբունքի լիարժեք կիրառումը։ Պետությունը նպատակաուղղվում է՝

- Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնմանը՝ Արցախը ներառյալ.
- 1920–1921 թթ. թուրք-բոլշևիկյան ագրեսիայի իրավաքաղաքական գնահատմանը.
- 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի իրավական անվավերության ճանաչմանը.
- ԽՍՀՄ պայմանագրային հիմքերով ձևավորված տարածքային դասավորությունների վերանայմանը.
- խորհրդային օկուպացիայի գնահատմանը պետական իրավահաջորդության շրջանակում։

3. Անցումային արդարադատություն

Նախատեսվում է համապարփակ անցումային արդարադատության իրականացում՝ հիմնված իրավաքաղաքական գնահատականի և պատասխանատվության սկզբունքների վրա։

4. Սահմանադրական և իրավական բարեփոխումներ

Իրականացվում է նոր իրավակարգի ձևավորում՝ ներառյալ՝

- նոր Սահմանադրություն.
- նոր Ընտրական օրենսգիրք.
- Կուսակցությունների մասին նոր օրենք։

Բարեփոխումները նպատակ ունեն ապահովելու ազգային ինքնիշխանության լիարժեք իրացումը։

5. Ժողովրդավարական ընտրություններ

Ապահովվում է ազատ, արդար և մրցակցային ընտրական գործընթաց՝ արտահերթ ընտրությունների կազմակերպման միջոցով։

6. Ազգային անվտանգություն

Ազգային անվտանգության հիմքում դրվում է «Ազգ-բանակ» հայեցակարգը։ Հայաստանի Հանրապետությունը դիտարկվում է որպես ինքնապաշտպանվող պետություն, որի անվտանգությունը հիմնված է սեփական կարողությունների և ոչ թե արտաքին կախվածությունների վրա։

ՄԱՍ I — ԱՌԱՋԸՆԹԱՑ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄ

Գլուխ 1 — Ենթակառուցվածք

Ենթակառուցվածքային համակարգը դիտարկվում է որպես պետական ինքնիշխանության հիմնասյուն։

Պետական քաղաքականությունն ուղղված է՝

- Հարավ–Հյուսիս տրանսպորտային միջանցքի զարգացմանը՝ Հայաստանը դարձնելով տարածաշրջանային տարանցիկ հանգույց.
- Ախուրյան–Քասախ ջրային համակարգի և հիդրոէներգետիկ ենթակառուցվածքների զարգացմանը.
- նոր ատոմակայանի կառուցմանը՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ.
- էներգետիկ անկախության ապահովմանը.
- վերականգնվող էներգետիկայի զարգացմանը.

- ազգային ավիացիոն համակարգի վերականգնմանը.
- ռազմավարական ենթակառուցվածքների նկատմամբ պետական վերահսկողության ապահովմանը:

Գլուխ 2 — Սյունիք և Վայոց Ձոր

Սյունիքի և Վայոց Ձորի մարզերը սահմանվում են որպես ռազմավարական առաջնահերթության գոտիներ:

Նախատեսվում է՝

- արտոնյալ տնտեսական ռեժիմի կիրառում.
- վերաբնակեցման խթանում.
- ենթակառուցվածքների արագ զարգացում.
- կանաչ տնտեսության փորձնական ծրագրերի իրականացում.
- վերականգնվող էներգետիկայի զարգացում:

Միաժամանակ մերժվում է Հայաստանի տարածքով որևէ արտատարածքային միջանցքի տրամադրումը՝ ցանկացած ձևակերպմամբ:

Գլուխ 3 — Տնտեսական և սոցիալական քաղաքականություն

Տնտեսական քաղաքականությունն ուղղված է արտադրողական տնտեսության ձևավորմանը:

Առաջնահերթություններն են՝

- արդար հարկային համակարգի ներդրում.
- փոքր և միջին բիզնեսի խթանում.
- տեխնոլոգիական և գիտական զարգացման խրախուսում.
- նպատակային սոցիալական պաշտպանություն.
- տեղահանված անձանց իրավունքների ապահովում.
- կրթության և առողջապահության համակարգերի վերակազմավորում.
- համընդհանուր առողջապահության ներդրում.

- սոցիալական բնակարանաշինություն.
- եկամուտների և սպառողական զամբյուղի կապի ապահովում.
- կոմունալ ծառայությունների սակագների նվազեցում։

ՄԱՍ II — ՕՐԵՆՔ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 4 — Անցումային արդարադատություն

- ժամանակավոր դատական մարմինների ձևավորում.
- լյուստրացիայի իրականացում.
- պատերազմի և վերջին իրադարձությունների համապարփակ քննություն։

Գլուխ 5 — Սահմանադրական բարեփոխումներ

- ընտրական իրավունքի սահմանափակումների վերացում.
- սփյուռքի մասնակցության ապահովում.
- դատական համակարգի վերակազմավորում.
- նոր Սահմանադրության ընդունում։

Գլուխ 6 — Մայր Աթոռի պաշտպանություն

Պետությունը երաշխավորում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անկախությունը, և բացառվում է պետական միջամտությունը եկեղեցական կառավարման ոլորտում։

ՄԱՍ III — ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 7 — Ազգ-բանակ

Ազգային անվտանգությունը հիմնվում է՝

- պրոֆեսիոնալ բանակի ձևավորման վրա.
- պաշտպանական ծախսերի ավելացման վրա.
- բարձր տեխնոլոգիաների կիրառման վրա.

- սահմանների լիարժեք պաշտպանության վրա.
- պաշտպանական արդյունաբերության զարգացման վրա։

ՄԱՍ IV — ԱՐՑԱԽ

Գլուխ 8 — 2023 թ. իրադարձությունների իրավական գնահատում

Արցախի բնակչության տեղահանումը գնահատվում է որպես էթնիկ զտում։

Պետության պարտավորություններն են՝

- անվտանգ և արժանապատիվ վերադարձի իրավունքի ապահովում.
- միջազգային պատասխանատվության ապահովում.
- ռեստիտուցիայի իրականացում.
- ՀՀ ներսում խտրականության բացառում։

Գլուխ 9 — Ռազմագերիներ

- հայրենադարձության ապահովում.
- միջազգային մեխանիզմների ակտիվ կիրառում։

Գլուխ 10 — Միջազգային միջնորդական ձևաչափ

- բանակցային գործընթացի վերականգնում.
- ռազմագերիների վերադարձի առաջնահերթություն.
- վերադարձի իրավունքի ապահովում միջազգային վերահսկողությամբ։

ՄԱՍ V — ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտաքին քաղաքականությունը հիմնվում է ինքնիշխանության և ազգային շահերի գերակայության վրա։

Հիմնական ուղղություններն են՝

- ԱՄՆ-ի հետ ռազմավարական համագործակցության զարգացում.
- Իրանի հետ խորացված գործընկերություն.

- եվրոպական գործընկերների հետ հարաբերությունների ամրապնդում.
- Հնդկաստանի հետ ռազմավարական համագործակցություն.
- Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորում միջազգային իրավունքի հիման վրա.
- Ռուսաստանի հետ հարաբերությունների վերաիմաստավորում առանց կախվածության.
- միջազգային կազմակերպություններում մասնակցության վերանայում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովրդավարական բևեռի ներկայացրած ծրագիրը միտված է Հայաստանի Հանրապետության պետականության ինստիտուցիոնալ վերականգնմանը և զարգացմանը՝ որպես ինքնիշխան, իրավահաջորդություն կրող և պաշտպանունակ պետություն:

Ծրագիրը համադրում է կարճաժամկետ հակաճգնաժամային կառավարման գործիքները և երկարաժամկետ ռազմավարական նպատակները՝ ուղղված ազգային անվտանգության ամրապնդմանը, տնտեսական և ենթակառուցվածքային անկախությանը, ինչպես նաև միջազգային իրավական դիրքերի վերականգնմանը:
Նախատեսում է նոր որակի պետականության ձևավորում, որտեղ Հայաստանը հանդես է գալիս որպես ինքնուրույն, պատասխանատու և կանխատեսելի սուբյեկտ միջազգային հարաբերություններում:

Սույն ծրագիրը հանդիսանում է պետականության պահպանման և զարգացման ռազմավարական հրամայական և ուղղված է ոչ միայն առկա ճգնաժամի հաղթահարմանը, այլև Հայաստանի Հանրապետության

շարունակականության, ինքնիշխանության և ազգային անվտանգության ապահովմանը երկարաժամկետ հեռանկարում:

***